ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/43

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Օհանյանի, Ա. Միերյանի և Կ. Թոփուզյանի (լիազորագրեր՝ տրված 29.06.2021թ.),

քննելով ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2021թ. ներկայացված (23.06.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/43 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 22.06.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն՝ Առողջապահության նախարարությունը 2021 թվականի կարիքների ձեռքբերման նպատակով հայտարարել էր «Տուբերկուլինի» «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցում, որն իրականացվել էր էլեկտրոնային գնումների Armeps

(www. armeps.am) համակարգի միջոցով (հայտերի բացումը տեղի է ունեցել 2021 թվականի մայիսի 24-ին ժամը՝ 17:00-ին):

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել են երկու ընկերություններ՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ և ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ:

«Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությունը չափաբաժին 1՝ Տուբերկուլինի համար ներկայացրել է իր գնային առաջարկը՝ առանց ԱԱՀ՝ քանի որ տվյալ դիագնոստիկ միջոցը /ԵՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասիչ 3006300000, ծագման երկիր՝ Ռուսաստան/ վաճառքի համար ենթակա չէ հարկման, որի ընդհանուր գինը կազմում է 22 500 000 / քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար՝ ՀՀ դրամ: Միաժամանկյա բանակցությունների արդյունքում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն վերջնական գին է ներկայացրել՝ 19 250 000 / տասնինը միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունը վերոնշյալ չափաբաժնի մասով գնային առաջարկը ներկայացրել է ԱԱՀ-ով /նշելով ծագման երկիրը կամ Ռուսաստան կամ Բուլուրիա/ ընդհանուր գինը՝ 37 500 000 / երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ ներառյալ ԱԱՀ-ն: Միաժամանկյա բանակցությունների արդյունքում « ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ ներկայացրել է վերջնական գին, որը կազմում է՝ 19 100 000 / տասնինը միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ առանց ԱԱՀ:

Տեղեկացնում ենք, որ երկու Մասնակիցները ներկայացրել են միևնույն ծագման երկրի /Ռուսաստան/ արտադրանք, որի դեպքում տվյալ ապրանքային անվանացանկի դասիչը՝ ապրանքը /3006300000 / վաճառքի համար ենթակա չէ հարկման:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ «Տուբերկուլինի» համար ներկայացված Հավելված 1.1 տեխնիկական բնութագրի մեջ բացի Ռուսաստանից նշել է կամ Բուլղարիա ծագման երկիր, գնային առաջարկը ներկայացնելով ԱԱՀ-ով: Բանակցությունների ընթացքում տվյալ ընկերությունը հրաժարվել է /խուսափել/ ներկայացնել այլ ներկայացրած ծագման երկրի կոդը, նշելով որ տվյալ ապրանքը հարկվում է վաճառքից ԱԱՀ-ով:

Ելնելով վերոգրյալից Մասնակիցները «Տուբերկուլինի» համար ներկայացրել են միևնույն ծագման երկրի արտադրանք՝ /Ռուսաստան/, սակայն ստացվում է « ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ ներկայացված գինը ԱԱՀ-ով է, իսկ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ առանց ԱԱՀ:

Բանակցությունների արդյունքում «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն ներկայացրել է վերջնական գին՝ 19 100 000 /տասնինը միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ, որի դեպքում պայմանագիր կնքելու ժամանակ դրան ավելանալու է նաև ԱԱՀ-ն, հետևաբար

պայմանագրի գինը կազմելու է՝ 22 920 000 / քսաներկու միլիոն ինը հարյուր քսան հազար ՀՀ դրամ, իսկ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի վերջնական ներկայացրած գինը առանց՝ ԱԱՀ 19 250 000 /տասնինը միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Բողոքի իրավական հիմքն են հանդիսանում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետը, 50-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին ենթակետը:

Բողոքի ապացույցներն են հանդիսանում՝ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը և ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017թվականի N 1317-Ն «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» որոշման Հավելված 3-ի 1-ին կետը և 3-րդ կետի՝ 1-ին և 2-րդ ենթակետերը:

Խնդրում եմ Չեղյալ համարել Առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 16-ի թիվ 2 որոշումը՝ ստացվում է «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը ամենացածրն է, իսկ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի ամենաբարձր:

Ուստի կարելի է անել հետևություն, որ գնման առարկա հանդիսացող՝ Տուբերկուլինի համար նախատեսված ԵՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասիչը /3006300000/ մի մասնակցի համար լինում է հարկվող, իսկ մյուսի համար չհարկվող»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.06.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը նիստին, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 30.06.2021թ. թիվ ՎԳ/06/13862-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 2021 թվականի հունիսի 23-ի Ձեր թիվ ԲՔԱ-ԳՆ/2/10260-2021 գրության՝ Առողջապահության նախարարությունը ներկայացնում է իր դիրքորոշումը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ Առողջապահության նախարարությունը ընդունում է բողոքաբերի կողմից ներկայացված փաստարկները: Սակայն, բողոքաբերի այն պնդմանը, թե «ՋԻԱՐՋԻ» և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված միևնույն ծագման երկրի արտադրանքը հարկման ենթակա չէ (քանի որ ապրանքային անվանացանկի դասիչը 3006300000 է), նշված գնման ընթացակարգի շրջանակներից դուրս է և ընդունելի չէ, քանի որ համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների, գնահատման համար հիմք է ընդունվում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, որի մեջ ներառված են գնային առաջարկները: Ընդ որում, վերջինս շտկման ենթակա փաստաթուղթ չէ: Վերոնշյալ գնման ընթացակարգի շրջանակում «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ներառվել է ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), իսկ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ում՝ առանց ԱԱՀ: Միաժամանակ, հայտնում եմ, որ գնման ընթացակարգի գնահատման փուլում, քանի դեռ ապրանքը մատակարարված չէ և հասանելի չէ ներմուծված ապրանքի անվանացանկի դասիչի վերաբերյալ տեղեկատվությունը, հետևաբար «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը հնարավոր չէ դիտարկել առանց ԱԱՀ-ի և գնահատել որպես ամենաբարձր առաջարկ:

Կից Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.06.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Նատալի Ֆարմ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունները:

1. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, գնման ենթակա ապրանքի՝ տուբերկուլինի համար ԱԱՀ հաշվարկելու իրավաչափությունը:

2. «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն Հավելված 2-ը՝ գնային առաջարկը ներկայացրել է հետևյալ տեսքով՝

Հավելված 2
«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով մրցույթի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)/ տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով թվերով/
1	Տուբերկուլին, Սպիտակուցային զտված ածանցյալ	31 250 000.00/երեսունմեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ	6 250 000.00 վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ	37 500 000. 00 երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 22.06.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ առողջապահության նախարարության 30.06.2021թ. թիվ ՎԳ/06/13862-2021 և 15.07.2021թ. թիվ ԱԱ//14829-2021 գրությունները՝ կից փաստաթղթերով և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

3. Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի

չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման...:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Նատալի Ֆարմ» և «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությունները:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն Հավելված 2-ը՝ գնային առաջարկը ներկայացրել է հետևյալ տեսքով՝

Հավելված 2
«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով մրցույթի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)/ տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով թվերով/
1	Տուբերկուլին, Սպիտակուցային զտված ածանցյալ	31 250 000.00/երեսունմեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ	6 250 000.00 վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ	37 500 000. 00 երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, գնման ենթակա ապրանքի՝ տուբերկուլինի համար ԱԱՀ հաշվարկելու իրավաչափությունը, մասնավորապես հայտնել է, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն ծագման երկիրը նշել է Ռուսաստան, որի դեպքում ԵՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասիչ 3006300000, ծագման երկիր՝ Ռուսաստան/ վաճառքի համար ենթակա չէ հարկման, մինչդեռ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն գնային առաջարկում տուբերկուլինի համար հաշվարկել է ԱԱՀ:

Այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման ենթակա ապրանքի անվանումն է՝ ***«Տուբերկուլին, սպիտակուցային զտված ածանցյալ»***:

Մինչդեռ ***համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1406-Ն որոշման հավելվածի՝ ԱՏԳ ԱԱ 3006 30 000 0 ծածկագրի դիրքի անվանումն է՝ կոնտրաստային նյութեր ռենտգեն հետազոտությունների համար, ախտորոշման ռեագենտներ՝ նախատեսված հիվանդներին ներմուծելու համար:***

Այսպիսով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 07.07.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/11073-2021 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը հայտնելով հետևյալը. «ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 17-րդ կետի համաձայն՝ ***բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Անձը կարող է նշանակել փորձաքննություն կամ դիմել տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմիններին՝ դիրքորոշում ստանալու համար:***

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող գործի քննությամբ պայմանավորված՝ խնդրում եմ հանձնարարել համապատասխան մարմնին՝ տալու մասնագիտական կարծիք՝ հետևյալի վերաբերյալ. ***արդյո՞ք «Տուբերկուլինը» հանդիսանում է կոնտրաստային նյութ ռենտգեն հետազոտությունների համար կամ ախտորոշման ռեագենտ՝ նախատեսված հիվանդներին ներմուծելու համար, թե՞ ոչ***»:

Ի պատասխան նշված գրության՝ ՀՀ առողջապահության նախարարությանը 15.07.2021թ. թիվ ԱԱ//14829-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ տուբերկուլինի վերաբերյալ մասնագիտական կարծիք՝

1. ***Տուբերկուլինը չի հանդիսանում կոնտրաստային նյութ***
2. ***Տուբերկուլինը չի հանդիսանում ախտորոշման ռեագենտ***»:

Այսպիսով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից բողոքով վիճարկվող փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ և հիմք ընդունելով տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմնի՝ ՀՀ առողջապահության նախարարության հարցման պատասխանը՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքն

անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ տուբերկուլինը չի հանդիսանում կոնտրաստային նյութ կամ ախտորոշման ռեագենտ, հետևաբար Ընթացակարգի գնման ենթակա ապրանքը՝ տուբերկուլինը, չի դասվում ԱՏԳ ԱԱ 3006 30 000 0 ծածկագրով դիրքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**